ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Դպրոցների կրթական գործընթացի որակի գնահատման արդյունքների համեմատական վերլուծություն

ՀՀ կրթության տեսչական մարմին

2022թ.

ՌԳՍՊՎԳ վարչություն

Դպրոցների կրթական գործընթացի որակի գնահատման արդյունքների համեմատական վերլուծություն

	Բովանդակություն	Էջը
1.	Նախաբան	1
2.	Կրթության որակի գնահատման գործիքակազմ	4
3.	Վերլուծության մեթոդաբանություն	6
4.	Չափանիշ 1. Սովորողների գրավոր աշխատանքների արդյունքներ	7
5.	Չափանիշ 2. Ուսուցիչներ	11
6.	Չափանիշ 3. Տնօրեն	14
7.	Չափանիշ 4. Կառավարման խորհուրդ	20
8.	Չափանիշ 5. Ուսումնական միջավայր	24
9.	Չափանիշ 6. Դիմակայունություն	27
10.	Չափանիշ 7. Կանոններ	30
11.	Եզրակացություն	34
12.	Առաջարկություններ	42

Նախաբան

Կրթության որակի բարձրացմանը և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցելու նպատակով ՀՀ կրթության տեսչական մարմինը (այսուհետ՝ նաև տեսչական մարմին) դեռևս 2020 թվականին իրականացված ստուգումների շրջանակում ՀՀ 9 հանրակրթական դպրոցներում (այսուհետ՝ նաև հաստատություն) կիրառել է կրթության որակի գնահատման գործիքակազմը (այսուհետ՝ նաև ձևաթղթեր), քանի որ միայն ՀՀ օրենսդրության պահանջների արձանագրումը և ըստ ստուգաթերթերի ռիսկայնության գնահատումը հնարավորություն չեն տալիս ամբողջական պատկերացում կազմել հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում կրթության որակին առնչվող խնդիրների մասին:

Համաձայն 2020 թվականի գործունեության ծրագրի՝ նախատեսված էր ձևաթղթերը կիրառել ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված բոլոր դպրոցներում, սակայն, Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված սահմանափակումների պատճառով գնահատումն իրականացվեց միայն 2020 թվականի I եռամսյակում ստուգված 9 դպրոցներում:

2020 թվականին Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ, ապա նաև ռազմական դրությամբ պայմանավորված կրթության կազմակերպման խնդիրներին անդրադարձ անելու նպատակով գնահատման ձևաթղթերը 2021 թվականին լրամշակվեցին՝ դրանք համապատասխանեցնելով տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրի նպատակներին: Քանի որ համաձայն գործունեության տարեկան ծրագրի՝ տեսչական մարմինը 2021 թվականը սահմանել էր որպես անցումային և վերականգնողական գործառույթների տարի՝ լրամշակված ձևաթղթերում ներառվեցին նոր հավելվածներ, որոնց միջոցով գնահատվում էր նաև հաստատությունում կրթության կազմակերպման անվտանգությունը, մատչելիությունը COVID-19-ի առկայության պայմաններում և հաստատության դիմակայունությունը տարատեսակ աղետներին:

Լրամշակված գործիքակազմը, համաձայն տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության ծրագրի, կիրառվեց ՀՀ 16 դպրոցներում իրականացված ստուգումների շրջանակում (***ՀՀ Վայոց ձորի մարզի Գետափի մ/դ, Գլաձորի մ/դ, Եղեգնաձորի ա/դ, ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի թիվ 5 հ/դ, Կապանի հ. 10 մ/դ, Կապանի հ. 13 հ/դ, Գորիսի թիվ 6 հ/դ, Մեղրիի հ. 1 մ/դ, ՀՀ Արմավիրի Սարդարապատի մ/դ, Ջրառատի մ/դ, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու թիվ 41 հ/դ, Գյումրու թիվ 5 հ/դ, Փանիկի մ/դ, ՀՀ Արարատի մարզի Սիսավանի մ/դ, ՀՀ Լոռու մարզի Մեծավանի հ. 2 մ/դ, Վանաձորի թիվ 6 հ/դ***):

Հաստատության կրթական գործընթացի գնահատման ընթացքում գնահատվել են կառավարման խորհրդի (այսուհետ՝ նաև խորհուրդ), տնօրենի և «Մաթեմատիկա» առարկայի ուսուցիչների գործունեությունը, ուսումնական միջավայրը, դպրոցի դիմակայունությունը տարատեսակ աղետներին, ինչպես նաև կրթության կազմակերպման անվտանգությունը և մատչելիությունը՝ COVID-19-ի առկայության պայմաններում: Գնահատման համար կիրառվել է «Գերազանց», «Շատ լավ», «Լավ», «Բավարար», «Անբավարար» սանդղակը:

Խորհուրդների գործունեության գնահատման արդյունքում գրանցվել են ցուցանիշներ վերոնշյալ սանդղակի բոլոր մակարդակներում: «Անբավարար» արդյունք է գրանցվել Սիսավանի միջնակարգ դպրոցում: Գնահատման արդյունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գնահատված դպրոցներում կառավարման խորհուրդը և տնօրենը կրթության որակի բարելավմանն ուղղված գործառույթների շրջանակում համագործակցությունը թույլ է: Գնահատման արդյունքները վկայում են կառավարման խորհուրդների՝ կրթության որակին նպաստելու ուղղությամբ պասիվ գործունեության վերաբերյալ:

Տնօրենների գործունեության գնահատման արդյունքում գրանցված ցուցանիշներն են հիմնականում՝ «Լավ» և «Բավարար», ինչը ենթադրում է, որ կրթական գործընթացի կազմակերպման որակն ունի բարելավման կարիք բոլոր գնահատված դպրոցներում:

Ուսուցիչները նույնպես գնահատման արդյունքում հիմնականում գրանցել են «Լավ» և «Բավարար» արդյունքներ, որոնք բավարար չեն կրթության բարձր որակ ապահովելու համար: Այդ մասին են վկայում սովորողների գիտելիքների գրանցված արդյունքները:

Ուսումնական միջավայրի գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ դպրոցները կարիք ունեն ֆիզիկական միջավայրի բարելավման, համակարգիչների նորացման, մարզադահլիճների վերանորոգման, լաբորատորիաների արդյունավետության բարձրացման, մեթոդական ձեռնարկների, գրականության և նյութատեխնիկական բազայի հարստացման:

Դպրոցներում գնահատվել են նաև տարատեսակ աղետներին դիմակայունությանը, դրանց ռիսկի նվազեցմանը, արտակարգ իրավիճակներում գործելու ուղիներին վերաբերող, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով դպրոցում կիրառվող սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման պահանջների կատարումը: Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ դպրոցների առնվազն 30%-ը անելիք ունեն արտակարգ իրավիճակներում դպրոցի գործունեության շարունակականության և կրթության գործընթացի վերականգման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների բարելավման ուղղությամբ: Եվ չնայած 16 դպրոցներից 11-ը (69%) կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելմանն ուղղված սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման տեսանկյունից գնահատվել են «Գերազանց», այնուհանդերձ, որոշ դպրոցներում դրանք ոչ ամբողջությամբ են պահպանվում:

Գնահատված 16 դպրոցներում սովորողների մնացորդային գիտելիքները ստուգվել են «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի միջոցով: Ստուգման շրջանակում՝ դպրոցների VI, IX և XI դասարաններում տրվել են գրավոր աշխատանքներ «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ» և «Երկրաչափություն») առարկայից: Գրավոր աշխատանքների տարբերակները ներառել են առաջադրանքներ նախորդ երկու ուսումնական տարիների գիտելիքների վերաբերյալ:

2021 թվականի առաջին կիսամյակում գնահատված 8 դպրոցներում տրված գրավոր աշխատանքների տարբերակների առաջադրանքների կեսը (5 միավորը) վերաբերել են 2018-2019 ուսումնական տարվա, կեսը՝ 2019-2020 ուսումնական տարվա գիտելիքներին: Նույն համամասնությունն է պահպանվել 2021 թվականի երկրորդ կիսամյակում գնահատված 8 դպրոցներում տրված գրավոր աշխատանքներում:

«Մաթեմատիկա» առարկայի առաջադրանքները կազմվել են ՀՀ ԿԳՄՍՆ Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից: Միաժամանակ, ուսումնասիրվել են նաև նույն սովորողների՝ նախորդ ուսումնական տարվա «Մաթեմատիկա» առարկայի ամփոփ գրավոր աշխատանքների արդյունքները:

Ըստ 10 միավորային սանդղակի՝ տեսչական մարմնի կողմից տրված «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի միջին գնահատականը 10 միավորային սանդղակում կազմել է 4.2 միավոր, մինչդեռ նշված դասարանների սովորողների նախորդ ուստարվա «Մաթեմատիկա» առարկայի ամփոփիչ գրավոր աշխատանքների միջին գնահատականը՝ 6.2 միավոր:

Հաշվի առնելով այն պահանջը, որ 10 միավորային սանդղակում դրական է համարվում «4» միավորը, կարող ենք ասել, որ ուսումնասիրված առարկաներից գնահատված դպրոցներն ունեն իրենց ուսուցման որակը բարձրացնելու խիստ անհրաժեշտություն, քանի որ որոշ դեպքերում գրավոր աշխատանքների միջին ցուցանիշը ստացվել է 4-ից՝ պարտադիր նվազագույնից ցածր:

Կարևոր է նշել, որ մնացորդային գիտելիքների արդյունքները խնդրահարույց են ՀՀ Արմավիրի մարզի ստուգված դպրոցներում, առավել բարձր երկու արդյունքները գրանցվել են ՀՀ Սյունիքի մարզի դպրոցներում:

Ստուգումների ընթացքում բոլոր դպրոցներում էլ հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ:

Կրթության որակի գնահատման գործիքակազմ

Կրթության որակը՝ ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության համաձայն՝ կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք է, որը գնահատվում է՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը և ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների:

Տեսչական մարմնի կողմից մշակված կրթության որակի գնահատման ձևաթղթի համար նույնպես հիմք էին հանդիսացել վերոնշյալ սահմանման մեջ առկա բաղադրիչները: Մասնավորապես.

✓ սովորողի անհատական կարիքներ (հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ պայմաններ).

✓ կրթության կազմակերպման գործընթաց (բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական և վարչական համակազմ).

✓ ուսուցման ծրագրային բովանդակություն (կրթական չափորոշիչներ, առարկայական ծրագրեր).

✓ կրթության կազմակերպման միջավայր (շենքային պայմաններ, ուսումնական միջավայր, կրթական պաշարներ, ուսումնական գրականություն, կրթության կազմակերպման անվտանգությունը, մատչելիությունը COVID-19-ի առկայության պայմաններում, հաստատության դիմակայունությունը տարատեսակ աղետներին).

✓ ուսումնառության գնահատված արդյունքներ (սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատում, հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին սովորողների համապատասխանության ստուգում՝ պետական ամփոփիչ ատեստավորում, մնացորդային գիտելիքների գնահատման արդյունքներ).

✓ կառավարում (կառավարման խորհուրդ, տնօրեն):

2020 թվականին կիրառված ձևաթուղթը բաղկացած էր «Տնօրեն», «Կառավարման խորհուրդ», «Ուսուցիչ», «Ուսումնական միջավայր» հավելվածներից, ինչպես նաև «Սովորողի կողմից ուսուցչի գործունեության գնահատման հարցաթերթ»-ից և «Ծնողի հարցաթերթիկ»-ից: Գնահատվել են դպրոցի տնօրենի, կառավարման խորհրդի գործունեությունը, «Հայոց լեզու», «Մաթեմատիկա» առարկաների ուսուցիչները, ուսումնական միջավայրը: Լրամշակման արդյունքում՝ 2021 թվականին կիրառված կրթական գործընթացի որակի գնահատման գործիքակազմը ներառեց հետևյալ հավելվածները՝ «Կառավարման խորհուրդ», «Տնօրեն», «Ուսուցիչ», «Մաթեմատիկա», «Ուսումնական միջավայր», «Դիմակայունություն», «Կանոններ (COVID-19)»: Ավելացված վերջին երկու ձևաթղթերում էլ գնահատման համար կիրառվել է «Գերազանց», «Շատ լավ», «Լավ», «Բավարար», «Անբավարար» սանդղակը (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ձևաթղթի գնահատման սանդղակներն ըստ հավելվածների և միավորների					
Հավելված	**«Գերազանց»**	**«Շատ լավ»**	**«Լավ»**	**«Բավարար»**	**«Անբավարար»**
«Տնօրեն»	**337-282**	**281-211**	**210-121**	**120-30**	**մինչև 30**
«Կառավարման խորհուրդ»	**73-63**	**62-51**	**50-35**	**34-16**	**մինչև 15**
«Ուսումնական միջավայր»	**77-68**	**67-53**	**52-33**	**32-16**	**մինչև 15**
«Ուսուցիչներ»	**188-162**	**161-132**	**131-94**	**93-34**	**մինչև 33**
«Դիմակայունություն»	**70-63**	**62-51**	**50-36**	**35-20**	**մինչև 19**
«Կանոններ»	**133-122**	**121-101**	**100-61**	**60-26**	**մինչև 25**

Կառավարման խորհրդի գնահատման համար ձևաթղթում ընտրված բնութագրիչները բխում են դպրոցի կառավարման խորհրդի՝ կրթության որակի բարձրացմանն ուղղված գործառույթներից:

Տնօրենի գնահատման համար ձևաթղթում ընտրված բնութագրիչները վերաբերում են միայն հաստատությունում կրթության որակին:

Հաստատությունում կրթության որակի գնահատման գործընթացի բաղկացուցիչ մաս է կազմել սովորողների մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքները «Մաթեմատիկա» առարկայից: Դրանք ձեռք են բերվել տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքների միջոցով: Այդ աշխատանքների արդյունքները գնահատման չափանիշ են ընտրվել և՛ «Ուսուցիչ», և՛ «Տնօրեն» հավելվածներում:

Վերլուծության մեթոդաբանություն

Ուսումնական հաստատությունների գնահատման արդյունքները համեմատվել և վերլուծվել են համեմատության հիերարխիկ (աստիճանակարգային) վերլուծության մեթոդով[1]: Համեմատական վերլուծության նպատակը կրթության որակի գնահատումն է՝ դպրոցների՝ ըստ չափանիշների համեմատության և հիերախիայի միջոցով:

Համեմատական վերլուծության չափանիշներն են՝ «Կառավարման խորհուրդ», «Տնօրեն», «Ուսուցիչ», «Ուսումնական միջավայր», «Սովորողների գրավոր աշխատանքների արդյունքներ», «Դիմակայունություն», «Կանոններ (COVID-19)» գործիքակազմով ստացված արդյունքները:

Թվային տվյալների մշակման գործընթացն իրականացվել է հետևյալ փուլերով. նախ վերոնշյալ չափանիշներին վերագրվել են կշիռներ՝ ըստ հիերարխիայի, այսինքն՝ կշիռները սահմանվել են ըստ չափանիշի կարևորության աստիճանի, որը մեթոդի հիմնական առանձնահատկությունն է: Ստորև բերված գծապատկերում ներկայացված է կրթական գործընթացի ուսումնասիրության աստիճանակարգային մոդելը և համապատասխան կշիռներն՝ ըստ չափանիշների կարևորության:

Աղյուսակ 2

Չափանիշներ՝ ըստ կարևորության	*Կարևորության գործակից*	*Կշիռ*
Մաթեմատիկայի գրավոր աշխատանքի միջին գնահատականներ	**1**	**29.4**
Մաթեմատիկայի ուսուցիչների միջին գնահատականներ	**1**	**29.4**
Տնօրեն	**2**	**14.7**
Կառավարման խորհուրդ	**3**	**9.8**
Ուսումնական միջավայր	**5**	**5.9**
Դիմակայունություն	**5**	**5.9**
Կանոններ (COVID-19)	**6**	**4.9**

[1] Thomas L. Saaty "Analytic Hierarchy Process" 1979

Այնուհետև, համեմատվել են ուսումնական հաստատություններում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները՝ ըստ վերոնշյալ չափանիշների, ապա՝ համադրելով նշված փուլերի արդյունքները, ստացվել է հաստատություններից յուրաքանչյուրի գնահատականը՝ կրթության որակի և կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության մասով:

Չափանիշ 1. Սովորողների գրավոր աշխատանքների արդյունքներ

«Մաթեմատիկա» առարկայից սովորողների՝ նախորդ երկու ուստարիների մնացորդային գիտելիքների ստուգման նպատակով գնահատված դպրոցների VI, IX և XI դասարաններում տրվել են գրավոր աշխատանքներ: Վերլուծության համար հիմք են հանդիսացել գրավոր աշխատանքների արդյունքները: Գրավոր աշխատանքին մասնակցած 1185 սովորողներից «Գերազանց» (9-10 միավոր) են գնահատվել 72-ը (6%), «Լավ» (7-8 միավոր)՝ 152-ը (13 %), «Բավարար» (4-6 միավոր)՝ 393-ը (33 %), «Անբավարար» (1-3 միավոր)՝ 568-ը (48%) (Գծապատկեր 1):



Գրավոր աշխատանքների միջին գնահատականը կազմել է 4.2 միավոր (Գծապատկեր 2):



Ինչպես արտահայտված է Գծապատկեր 2-ում՝ IX դասարանի գրավոր աշխատանքների միջին գնահատականը կազմել է 3.7 միավոր՝ «Անբավարար», իսկ համեմատաբար բարձր արդյունքներ գրանցվել են VI դասարանում:

Համեմատելով տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները այդ սովորողների՝ «Մաթեմատիկա» առարկայի նախորդ տարվա գրավոր աշխատանքների արդյունքների հետ՝ ստացվել է հետևյալ պատկերը (Գծապատկեր 3)՝



Արդյունքները խիստ հակասական են «Անբավարար» գնահատականների դեպքում: Տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքի դեպքում «Անբավարար» են գնահատվել

գրավոր աշխատանքի մասնակիցների 48%-ը, իսկ նախորդ տարվա ամփոփիչ գրավոր աշխատանքից՝ 4%-ը:

Տեսչական մարմնի կողմից 2021 թվականի առաջին կիսամյակում տրված գրավոր աշխատանքների առաջադրանքների կեսը (5 միավորը) վերաբերել են 2018-2019 ուսումնական տարվա, կեսը՝ 2019-2020 ուսումնական տարվա գիտելիքներին, իսկ երկրորդ կիսամյակում տրված գրավոր աշխատանքների տարբերակների դեպքում համապատասխանաբար՝ 2019-2020 և 2020-2021 ուսումնական տարիների գիտելիքներին (Գծապատկերներ 4 և 5):





Ինչպես ներկայացված է գծապատկերներ 4-ում և 5-ում՝ 2021 թվականի 1-ին կիսամյակում գնահատված դպրոցներում ցածր արդյունքներ են գրանցվել 2019-2020 ուստարվա գիտելիքներին վերաբերող առաջադրանքներից, 2-րդ կիսամյակում գնահատված դպրոցներում՝ 2020-2021 ուսումնական տարվա գիտելիքներին վերաբերող առաջադրանքներից:

Գրավոր աշխատանքների միջին գնահատականներն ըստ գնահատված դպրոցների՝ ներկայացված են ստորև բերված դիագրամում (Գծապատկեր 6).



Ինչպես ներկայացված է գծապատկեր 6-ում՝ տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքում միջին գնահատականը 4 միավորից (10 միավորային սանդղակում) ցածր է գրանցվել դպրոցներից 7-ում (44%): Ամենաբարձր արդյունքը գրանցվել է Գորիսի թիվ 6 հիմնական դպրոցում՝ 6.1 միավոր (4-6 միավորները՝ «Բավարար»), ամենացածր միևնույն արդյունքը՝ ՀՀ Արմավիրի մարզի Սարդարապատի և Ջրառատի միջնակարգ դպրոցներում:

Չափանիշ 2. Ուսուցիչներ

Այս չափանիշի համար հիմք են հանդիսացել ձևաթղթի «Ուսուցիչ» հավելվածի գնահատման արդյունքները: Նշված հավելվածով ուսումնական հաստատություններում գնահատվել են «Մաթեմատիկա» առարկայի այն ուսուցիչները, որոնց դասավանդած դասարաններում տեսչական մարմնի կողմից տրվել են գրավոր աշխատանքներ: Վերլուծության համար, որպես չափանիշ, կիրառվել են դպրոցների գնահատված ուսուցիչների միջին գնահատականները:

Ուսուցիչների գնահատումն իրականացվել է համաձայն հետևյալ բնութագրիչների՝

- ուսուցչի դասավանդած դասարաններում սովորողների առաջադիմության աճի կամ նվազման դինամիկան (համեմատվում են նախորդ երկու կիսամյակների ցուցանիշների տոկոսային թվերը).
- ավարտման ցուցանիշ՝ ըստ կրթական աստիճանների (հիմք են ընդունվել նախորդ ուստարում ուսուցչի դասավանդած դասարաններում սովորողների՝ տվյալ առարկայի ավարտական և պետական ավարտական քննությունների արդյունքները).
- ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքների արդյունքներ (գնահատումն իրականացվել է ըստ «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թվի).
- առարկայի որակի ցուցանիշը (համեմատվել են ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից «Լավ» և «Գերազանց» գնահատականը պահպանած սովորողների և նախորդ կիսամյակում «Լավ» և «Գերազանց» գնահատական ստացած այն դասարանների սովորողների միջին տոկոսային թվերը, որտեղ դասավանդել է տվյալ ուսուցիչը).
- տվյալ ուսուցչի աշակերտների հաջողությունները այդ առարկայի օլիմպիադաներից (մարզային, հանրապետական, միջազգային).
- ուսուցչի գիտամանկավարժական գործունեությունը (գիտական, մանկավարժական հոդվածների առկայություն).
- ուսուցչի մասնագիտական ակտիվությունը (կրթական կոնֆերանսներին, համաժողովներին, ծրագրերին, հեռավար կրթության արդյունավետ կազմակերպման նպատակով իրականացված վերապատրաստման գործընթացին մասնակցություն):

Մաթեմատիկայի ուսուցիչների միջին գնահատականներն ըստ դպրոցների ներկայացված են Գծապատկեր 7-ում: Ամենացածր արդյունքը գրանցվել է Ջրառատի միջնակարգ դպրոցում, ամենաբարձր արդյունքը՝ Մեղրիի հ. 1 միջնակարգ դպրոցում (Գծապատկեր 7):



Գծապատկեր 7-ի տվյալների համաձայն՝ ըստ ուսուցիչների միջին գնահատականի՝ «Գերազանց» և «Շատ լավ» արդյունք գրանցած դպրոցներ չկան, «Լավ» արդյունք գրանցվել է 4, «Բավարար»՝ 11, «Անբավարար»՝ 1 դպրոցներում: Կարևոր է նշել, որ համեմատաբար ցածր արդյունքներ գրանցած 2 դպրոցները ՀՀ Արմավիրի մարզից են:

Ըստ 16 դպրոցների 34 ուսուցիչների գնահատման արդյունքների՝ ունենք հետևյալ պատկերը՝.

- նախորդ ուստարում ուսուցիչներից 7-ի (21%) դասավանդած դասարաններում «Լավ» (7-8) և «Գերազանց» (9-10) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը կազմել է 40-50%, համապատասխանաբար 5 դպրոցներում ***(Գետափի մ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Մեղրիի հ. 1 մ/դ, Սարդարապատի մ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ)***, և ուսուցիչներից 10-ի մոտ (29%) մինչև 39% արդյունք գրանցվել է 7 դպրոցներում ***(Գյումրու հ. 41 հ/դ, Գորիսի հ. 6 հ/դ, Կապանի հ. 10 մ/դ, Ջրառատի մ/դ, Սիսավանի մ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ, Փանիկի մ/դ):***
- ուսուցիչներից 9-ի (26%) դասավանդած դասարաններում ցածր (4-6) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը նախորդ երկու կիսամյակներից առաջինի նկատմամբ երկրորդում աճել է՝ 6 դպրոցներում (***Գորիսի հ. 6 հ/դ, Կապանի հ. 13 հ/դ, Մեղրիի հ. 1 մ/դ, Ջրառատի մ/դ, Սարդարապատի մ/դ***):
- նախորդ ուսումնական տարում ավարտման ցուցանիշը, ըստ կրթական 2-րդ աստիճանի կազմել է 86.4%՝ 1 դպրոցում ***(Վանաձորի հ. 6 հ/դ)***, 90-99% ՝ 2 դպրոցներում ***(Գյումրու հ. 5 հ/դ, Ջրառատի մ/դ)***:
- ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքների արդյունքում «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների

ընդհանուր թվի նկատմամբ կազմել է 41%-ից ավելի՝ 12 դպրոցներում ***(Գլաձորի մ/դ, Գյումրու հ. 5 հ/դ, Գյումրու հ. 41 հ/դ, Եղեգնաձորի ա/դ, Կապանի հ. 10 մ/դ, Կապանի հ. 13 հ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Ջրառատ մ/դ, Սարդարապատի մ/դ, Սիսավանի մ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ, Փանիկի մ/դ)***: Վերոնշված արդյունքը դիտվել է գնահատված ուսուցիչներից 18-ի (53%) դեպքում:

➢ ստուգման ընթացքում տրված բոլոր գրավոր աշխատանքներից «Լավ» և «Գերազանց» գնահատականը պահպանած սովորողների միջին տոկոսային թիվը նախորդ կիսամյակում «Լավ» և «Գերազանց» գնահատական ստացած այն դասարանների սովորողների միջին տոկոսային թվի նկատմամբ, որտեղ դասավանդել են նույն ուսուցիչները, գրանցել է նվազման միտում՝ 16 դպրոցներում ***(Գեղափի մ/դ, Գլաձորի մ/դ, Գյումրու հ. 5 հ/դ, Գյումրու հ. 41 հ/դ, Գորիսի հ. 6 հ/դ, Եղեգնաձորի ա/դ, Կապանի հ. 10 մ/դ, Կապանի հ. 13 հ/դ, Մեղրիի հ. 1 մ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Ջրառատի մ/դ, Սարդարապատի մ/դ, Սիսավանի մ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ, Փանիկի մ/դ)***: Արդյունքը գրանցվել է գնահատված ուսուցիչներից 30-ի (91%) դեպքում:

➢ ստուգման ընթացքում տրված «Մաթեմատիկայի» գրավոր աշխատանքների արդյունքում «Լավ» և «Գերազանց» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է 30%-ից ցածր ՝ 15 դպրոցներում ***(Գեղափի մ/դ, Գլաձորի մ/դ, Գյումրու հ. 5 հ/դ, Գյումրու հ. 41 հ/դ, Գորիսի հ. 6 հ/դ, Եղեգնաձորի ա/դ, Կապանի հ. 10 մ/դ, Կապանի հ. 13 հ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Ջրառատի մ/դ, Սարդարապատի մ/դ, Սիսավանի մ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ, Փանիկի մ/դ)***: Պատկերը գրանցվել է գնահատված ուսուցիչներից 31-ի (91%) դեպքում:

➢ առարկայական օլիմպիադայի մարզային փուլ անցած մասնակիցներ եղել են 2 դպրոցներում ***(Գորիսի հ. 6 հ/դ, Եղեգնաձորի ա/դ)***:

➢ կրթական ծրագրերի, կոնֆերանսների, համաժողովների մասնակցություն ունեցել են 5 դպրոցների ***(Գյումրու հ. 41 հ/դ,Կապանի հ. 13 հ/դ, Մեղրիի հ. 1 մ/դ, Սարդարապատի մ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ)*** 5 ուսուցիչներ:

➢ հեռավար կրթության արդյունավետ կազմակերպման նպատակով իրականացված վերապատրաստման գործընթացների մասնակցել են 8 դպրոցների ***(Գյումրու հ. 41 հ/դ, Գորիսի հ. 6 հ/դ, Եղեգնաձորի ա/դ, Կապանի հ. 13 հ/դ, Մեղրիի հ. 1 մ/դ, Սարդարապատի մ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ)*** 15 ուսուցիչներ:

➢ գիտամանկավարժական հոդվածներ հրապարակել են 2 դպրոցների (***Վանաձորի հ. 6 հ/դ, Փանիկի մ/դ***) 2 ուսուցիչներ:

Ինչպես ցույց են տալիս գնահատման արդյունքները՝ ուսուցիչներն անելիք ունեն սովորողների առաջադիմության որակի բարձրացման ուղղությամբ:

Չափանիշ 3. Տնօրեն

Այս չափանիշի համար հիմք են հանդիսացել ձևաթղթի «Տնօրեն» հավելվածի գնահատման արդյունքները: Դպրոցի տնօրենի գնահատումն իրականացվել է համաձայն հետևյալ բնութագրիչների՝

- «Լավ» (7-8) և «Գերազանց» (9-10) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը նախորդ ուստարում (բարձր ցուցանիշ՝ 50%-ից բարձր, միջին ցուցանիշ՝ 40%-50%, ցածր ցուցանիշ՝ մինչև 39%).
- առաջադիմության աճի կամ նվազման դինամիկան (համեմատվել են նախորդ երկու կիսամյակների ցածր (4-6) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թվերը).
- ավարտման ցուցանիշ՝ ըստ կրթական 2-րդ, 3-րդ աստիճանների (հիմք են ընդունվել նախորդ ուստարում դպրոցի սովորողների ավարտական և պետական ավարտական քննությունների արդյունքները).
- դպրոցից բուհ անցման ցուցանիշ (հիմք է ընդունվել քննություններին (միասնական, բուհական, միջազգային) մասնակցածների և բուհեր ընդունվածների տոկոսային հարաբերակցությունը, ինչպես նաև միասնական քննություններից անբավարար ստացած շրջանավարտների տոկոսային թիվը միասնական քննություններին մասնակցած սովորողների թվի նկատմամբ).
- հաճախելիության ցուցանիշ (հիմք է ընդունվել նախորդ ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ կամ 200 ժամից ավելի բացակայած սովորողների տոկոսային համամասնությունը սովորողների ընդհանուր թվի նկատմամբ).
- մնացորդային գիտելիքների ստուգման ցուցանիշ (հիմք է ընդունվել ստուգման ընթացքում տեսչական մարմնի կողմից տրված «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքներից «Անբավարար», «Լավ» և «Գերազանց» գնահատված սովորողների տոկոսային հարաբերակցությունը).
- գնահատման որակի ցուցանիշ (համեմատվել են ստուգման ընթացքում տրված բոլոր գրավոր աշխատանքներից «Լավ» և «Գերազանց» գնահատականը պահպանած սովորողների և նախորդ կիսամյակում «Լավ» և «Գերազանց» գնահատական ստացած սովորողների միջին տոկոսային թվերը).
- առարկայական օլիմպիադաներին մասնակցության ցուցանիշ (հիմք է ընդունվել նախորդ ուստարում առարկայական օլիմպիադաների մարզային փուլ անցած մասնակիցների տոկոսային թիվը՝ տարածքային փուլին մասնակցած սովորողների թվի նկատմամբ).
- տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություն ունեցող երեխաների հայտնաբերման ցուցանիշ (հիմք է ընդունվել նախորդ ուստարում առարկայական օլիմպիադաներում հաղթող և (կամ) խրախուսված մասնակիցներ ունենալը).

- ուսուցիչների գնահատման ցուցանիշ (հիմք է ընդունվել ստուգման ընթացքում «Շատ լավ» և «Գերազանց» գնահատված ուսուցիչների տոկոսային թիվը գնահատված ուսուցիչների թվի նկատմամբ).
- ուսուցիչների մասնագիտական ակտիվության ցուցանիշ (հիմք է ընդունվել ուսուցիչների գիտական, մանկավարժական հոդվածներ ունենալը, կրթական կոնֆերանսների, համաժողովների, ծրագրերի մասնակցությունը).
- կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ցուցանիշ (հիմք է ընդունվել ստուգման արդյունքում կազմված ակտը կամ տեղեկանքը),
- դպրոցի տարեկան աշխատանքային պլաններում՝ դպրոցի զարգացման ծրագրի նպատակադրումների ներառման ցուցանիշ.
- ԿԱՊԿՈՒ սովորողների կրթություն ստանալու բարենպաստ պայմանների ապահովման ցուցանիշ (դպրոցի ֆիզիկական միջավայր, համապատասխան մասնագետների առկայություն).
- հեռավար կրթությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով ուսումնական հաստատության կողմից ուսուցիչների վերապատրաստման գործընթացի ապահովման ցուցանիշ.
- աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պատրաստվածության ցուցանիշ:

Տնօրենների գործունեության գնահատման արդյունքում ամենացածր արդյունքը գրանցվել է Գյումրու հ. 5 հիմնական դպրոցում, ամենաբարձր արդյունքը՝ Մեղրիի հ. 1 միջնակարգ դպրոցում (Գծապատկեր 8):



Ըստ Գծապատկեր 8-ի տվյալների՝ «Շատ լավ» արդյունք գրանցվել է 2, «Լավ»՝ 11, «Բավարար»՝ 3 դպրոցներում: «Անբավարար» և «Գերազանց» գնահատված դպրոցներ չկան: Կարևոր է նշել, որ «Տնօրեն» հավելվածով «Շատ լավ» գնահատված երկու դպրոցներն էլ ՀՀ Սյունիքի մարզից են:

Գնահատման արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.

- Ըստ «Լավ» (7-8) և «Գերազանց» (9-10) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թվի (նախորդ ուստարում) ցածր արդյունքներ են գրանցվել 4 (ամենացածրը՝ 28.7%՝ Ջրառատի մ/դ-ում), միջին արդյունքներ՝ 3, բարձր արդյունքներ՝ 9 դպրոցներում (ամենաբարձրը՝ 78.4%՝ Սարդարապատի մ/դ-ում):
- Ցածր (4-6) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը նախորդ երկու կիսամյակներից առաջինի նկատմամբ, երկրորդում նվազել է՝ 11, նույնն է մնացել՝ 1 (Գլաձորի մ/դ), աճել է՝ 5 դպրոցներում:
- Ավարտման ցուցանիշը՝ ըստ կրթական ***3-րդ աստիճանի*** կազմել է 100%-ից ցածր (նախորդ ուսումնական տարում եղել են պետական ավարտական քննություններից անբավարար ստացած սովորողներ) ***Եղեգնաձորի ավագ, Սարդարապատի միջնակարգ*** դպրոցներում: Ավարտման

ցուցանիշը՝ ըստ կրթական ***2-րդ աստիճանի*** կազմել է 100%-ից ցածր (նախորդ ուսումնական տարում եղել են ավարտական քննություններից անբավարար ստացած սովորողներ) ***Վանաձորի թիվ 6 հիմնական, Ջրառատի և Սարդարապատի միջնակարգ*** դպրոցներում:

➢ Քննություններին (միասնական, բուհական, միջազգային) մասնակցած սովորողներից «Անբավարար» են ստացել 20%-ից ավելին՝ ***Գետափի* միջնակարգ դպրոցում,** 6% - 20%-ը՝ ***Եղեգնաձորի ավագ, Սիսավանի***, ***Կապանի թիվ 10, Սարդարապատի միջնակարգ*** դպրոցներում, «Անբավարար» ստացած սովորողներ չեն եղել ***Գլաձորի, Մեծավանի թիվ 2, Մեղրիի թիվ 1, Փանիկի և Ջրառատի միջնակարգ*** դպրոցներում:

➢ Նախորդ ուստարում քննությունների (միասնական, բուհական, միջազգային) արդյունքում բուհեր ընդունված շրջանավարտների թիվը 100%-ից ցածր է ***Կապանի թիվ 10, Սիսավանի միջնակարգ և Եղեգնաձորի ավագ դպրոցներում:***

➢ Նախորդ ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողների տոկոսային թիվը սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է մինչև 1% (բարձր ցուցանիշ)՝ ***Մեծավանի թիվ 2, Գլաձորի, Սարդարապատի, Կապանի թիվ 10 միջնակարգ, Գյումրու թիվ 41 և Վանաձորի թիվ 6 հիմնական*** դպրոցներում: Գտնվել է 2% - 5% (միջին ցուցանիշ) միջակայքում՝ **Ջրառատի միջնակարգ դպրոցում**: 120-200 ժամ բացակայած սովորողներ չեն եղել ***Փանիկի, Մեղրիի թիվ 1, Գետափի***, ***Սիսավանի* միջնակարգ, *Սիսիանի թիվ 5, Կապանի թիվ 13, Գորիսի թիվ 6, Գյումրու թիվ 5 հիմնական և Եղեգնաձորի ավագ*** դպրոցներում:

➢ Նախորդ ուսումնական տարվա ընթացքում 200 ժամից ավելի բացակայած սովորողների տոկոսային թիվը սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է մինչև 1% (բարձր ցուցանիշ)՝ ***Սիսավանի, Մեծավանի թիվ 2 և Սարդարապատի միջնակարգ*** դպրոցներում: Գտնվել է **1%-3%** միջակայքում՝ ***Գյումրու թիվ 41 հիմնական և Ջրառատի միջնակարգ*** դպրոցներում: 200 ժամից ավելի բացակայություններ ունեցող սովորողներ չեն եղել ***Փանիկի, Մեղրիի թիվ 1, Գլաձորի, Կապանի թիվ 10, Գետափի***, ***Սիսավանի միջնակարգ, Սիսիանի թիվ 5, Կապանի թիվ 13, Գորիսի թիվ 6, Գյումրու թիվ 5, Վանաձորի թիվ 6 հիմնական և Եղեգնաձորի ավագ*** դպրոցներում:

➢ Տեսչական մարմնի կողմից տրված «Մաթեմատիկայի» գրավոր աշխատանքների արդյունքում «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է **մինչև 30%՝ Գետափի, Մեղրիի թիվ 1 միջնակարգ, Գորիսի թիվ 6 հիմնական դպրոցներում, 31%-40% (միջին ցուցանիշ)՝ Վանաձորի թիվ 6 հիմնական, Գլաձորի, Փանիկի միջնակարգ, Սիսիանի թիվ 5, Գյումրու թիվ 41 հիմնական դպրոցներում: 41 %-ից ավելի՝ Կապանի թիվ 10 միջնակարգ (64%), Եղեգնաձորի ավագ (53.5%), Գյումրու թիվ 5 (56%), Կապանի թիվ 13 հիմնական (57%), Սիսավանի (63%), Մեծավանի թիվ 2 (54%), Սարդարապատի (81.8%), Ջրառատի միջնակարգ (82.9%) դպրոցներում:**

- Տեսչական մարմնի կողմից տրված «Մաթեմատիկայի» գրավոր աշխատանքների արդյունքում «Լավ» և «Գերազանց» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է 31%-40% (միջին արդյունք)՝ **Սիսիանի թիվ 5 հիմնական, Մեղրիի թիվ 1 միջնակարգ դպրոցներում**, մնացած բոլոր դպրոցներում կազմել է մինչև 30%:
- Տեսչական մարմնի կողմից տրված բոլոր գրավոր աշխատանքներից «Լավ» և «Գերազանց» գնահատականը պահպանած սովորողների միջին տոկոսային թիվը նախորդ կիսամյակում «Լավ» և «Գերազանց» գնահատական ստացած սովորողների միջին տոկոսային թվի նկատմամբ (հաշվարկվել է ըստ առարկաների և միջինացվել) **բոլոր դպրոցներում *նվազել է*** (ցածր ցուցանիշ):
- Առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին մասնակցած սովորողներից չեն անցել մարզային փուլ՝ **Գլաձորի, Գետափի միջնակարգ, Սիսիանի թիվ 5, Գյումրու թիվ 41, Վանաձորի թիվ 6 և Գյումրու թիվ 5 հիմնական** դպրոցներում: Առարկայական օլիմպիադաների մարզային փուլ անցած մասնակիցների տոկոսային թիվը տարածքային փուլին մասնակցած սովորողների թվի նկատմամբ կազմել է 50%-ից ավելի (բարձր ցուցանիշ)՝ **Եղեգնաձորի ավագ, Սիսավանի, Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոցներում,** 20% -49% (միջին ցուցանիշ) կազմել է **Փանիկի, Մեղրիի թիվ 1, Կապանի թիվ 10 միջնակարգ, Գորիսի թիվ 6, Կապանի թիվ 13 հիմնական դպրոցներում,** 0%- 19%՝ **Ջրառատի և Սարդարապատի միջնակարգ դպրոցներում**: Մինչդեռ՝ մարզային փուլում որոշակի հաջողություններ են արձանագրել **Կապանի թիվ 13 հիմնական, Կապանի թիվ 10, Փանիկի, Սարդարապատի, Ջրառատի, Եղեգնաձորի ավագ դպրոցների** սովորողները: Հանրապետական փուլում հաջողություններ են ունեցել **Եղեգնաձորի ավագ և Սարդարապատի միջնակարգ դպրոցների** սովորողները:
- Գնահատված դպրոցներում «Շատ լավ» և «Գերազանց» գնահատված ուսուցիչներ չկան:
- Գնահատված բոլոր դպրոցներում էլ հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ. **Սիսավանի միջնակարգ** դպրոցում 1, **Մեծավանի թիվ 2**, **Մեղրիի թիվ 1 միջնակարգ և Գյումրու թիվ 5 հիմնական դպրոցներում՝** 2-ական, մյուս բոլոր դպրոցներում՝ 3 և ավելի խախտումներ են:
- Դպրոցի զարգացման ծրագրի նպատակադրումները դպրոցի տարեկան աշխատանքային պլաններում՝ ծրագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան լիարժեք արտացոլվել են՝ 9, մասամբ՝ 6 դպրոցներում:
- Նախորդ ուսումնական տարում մաթեմատիկայի դրվածքի ուսումնասիրություն չի իրականացվել **Եղեգնաձորի ավագ, Ջրառատի, Կապանի թիվ 10, Սիսավանի միջնակարգ, Գյումրու թիվ 5 հիմնական** դպրոցներում:

➢ ԿԱՊԿՈՒ[2] սովորողների կրթություն ստանալու բարենպաստ պայմանների ապահովումը (դպրոցի ֆիզիկական միջավայր, համապատասխան մասնագետների առկայություն) լիարժեք իրականացվել է 8, մասամբ՝ 6 դպրոցներում: **Եղեգնաձորի ավագ, Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոցներում** ԿԱՊԿՈՒ սովորողներ չկան:

➢ Ուսուցիչների վերապատրաստման գործընթացը՝ հեռավար կրթությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով լիարժեք իրականացվել է՝ 5, մասամբ՝ 9, չի իրականացվել՝ 2 դպրոցներում (**Գյումրու թիվ 5 հիմնական, Փանիկի միջնակարգ դպրոցներում**):

➢ Աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու կառավարման խորհուրդը տնօրենի հրամանով և սահմանված կարգով չի ստեղծվել **Մեծավանի թիվ 2 և Ջրառատի միջնակարգ դպրոցներում**: **Գորիսի թիվ 6 հիմնական դպրոցում** ստեղծվել է քաղաքաշտպանության շտաբ, իսկ **Եղեգնաձորի ավագ դպրոցում** տնօրենի հրամանը առկա չէ:

➢ Դպրոցի անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով չի մշակվել ուսումնական հաստատության և հարակից տարածքի առանձնահատկություններից բխող աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլան **Ջրառատի միջնակարգ դպրոցում,** մասամբ է մշակվել **Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցում:**

➢ Ուսուցիչների **մինչև 5%-ը** ունեն գիտական, մանկավարժական հոդվածներ՝ **Եղեգնաձորի ավագ, Ջրառատի, Սարդարապատի միջնակարգ, Կապանի թիվ 13, Գորիսի թիվ 6 հիմնական դպրոցներում**, **մինչև 5%-ը** ունեն մասնակցություն կրթական կոնֆերանսներին, համաժողովներին, ծրագրերին՝ **Սարդարապատի, Ջրառատի միջնակարգ, Եղեգնաձորի ավագ, Կապանի թիվ 13 հիմնական դպրոցներում:** Ուսուցիչների 5%-ից ավելին ունեն գիտական, մանկավարժական հոդվածներ և մասնակցություն կրթական կոնֆերանսներին, համաժողովներին, ծրագրերին՝ **Սիսիանի թիվ 5, Վանաձորի թիվ 6 հիմնական, Մեղրիի թիվ 1 միջնակարգ դպրոցներում:**

➢ Դպրոցի տնօրենը և անձնակազմը, ԱԻ-ում բնակչության պաշտպանության բնագավառի համապատասխան ստորաբաժանումների, ՏԻՄ-երի ու ծնողների աջակցությամբ և սովորողների մասնակցությամբ, դպրոցի աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործընթացը չեն ապահովվել Ջրառատի միջնակարգ դպրոցում: Նշված գործընթացը լիարժեք իրականացվել է 8, մասամբ՝ 7 դպրոցներում:

Այսպիսով, կրթության որակի բարձրացմանն ուղղված գործառույթների շրջանակում խնդիրներ առկա են գնահատված բոլոր դպրոցներում: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել թե՛ սովորողների գիտելիքների ամրապնդման, թե՛ ուսուցիչների մասնագիտական կարողությունների

[2] Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

զարգացման խթանման, թե՛ կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ուղղություններով:

Չափանիշ 4. Կառավարման խորհուրդ

Դպրոցի կառավարման խորհրդի գնահատումն իրականացվել է ձևաթղթի «Կառավարման խորհուրդ» հավելվածի համաձայն: Հավելվածում ներառված բնութագրիչները բխում են դպրոցի կառավարման խորհրդի՝ կրթության որակի բարձրացմանն ուղղված գործառույթներից: Մասնավորապես՝

- դպրոցի կառավարման խորհուրդը տնօրենի գործունեության նկատմամբ իրականացրել է ընթացիկ վերահսկողություն.
- խորհուրդը քննարկել է դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները.
- խորհուրդը մասնակցել է դպրոցի արտաքին գնահատմանը, քննարկել է ներքին և արտաքին գնահատման արդյունքները.
- խորհուրդը վերահսկել է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը.խ
- խորհուրդը լիազորված մարմին է ներկայացրել դպրոցի գործունեության վերաբերյալ առաջարկություններ.
- խորհրդի կողմից կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարումը:

Եղեգնաձորի ավագ դպրոցի կառավարման խորհրդի գործունեությունը չի գնահատվել՝ ստուգման փաթեթում «Հանրակրթական ուսումնական հաստատությունում կառավարման խորհրդի լիազորությունների կատարմանն ուղղված ստուգումների» N 06 ստուգաթերթը ներառված չլինելու պատճառով: Ըստ գնահատման չափանիշների՝ ամենաբարձր արդյունքը գրանցվել է Սարդարապատի միջնակարգ, ամենացածր արդյունքը՝ Սիսավանի միջնակարգ դպրոցներում: Գնահատված դպրոցներում «Կառավարման խորհրդի» գործունեության արդյունքները դիագրամի տեսքով ներկայացված են Գծապատկեր 9-ում:



Գծապատկեր 9-ի տվյալների համաձայն՝ կառավարման խորհրդի գործունեությունը «Գերազանց» գնահատվել է 1, «Շատ լավ»՝ 6, «Լավ»՝ 2, «Բավարար»՝ 5, «Անբավարար»՝ 1 դպրոցներում: Գնահատման արդյունքում ունենք հետևյալ պատկերը՝

➢ կառավարման խորհրդի կողմից տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն իրականացվել է առնվազն յուրաքանչյուր կիսամյակ՝ 2 դպրոցներում **(Սարդարապատի մ/դ, Կապանի թիվ 10 մ/դ)**, վերահսկողությունն իրականացվել է տարեկան մեկ անգամ՝ 9 (60%) դպրոցներում ***(Մեծավանի թիվ 2 մ/դ, Փանիկի մ/դ, Գլաձորի մ/դ, Մեղրիի թիվ 1 մ/դ, Գետափի մ/դ, Վանաձորի թիվ 6 հ/դ, Գյումրու թիվ 41 հ/դ, Կապանի թիվ 13 հ/դ, Սիսիանի թիվ 5 հ/դ)***: **Ջրառատի, Սիսավանի միջնակարգ, Գորիսի թիվ 6, Գյումրու թիվ 5 հիմնական** (27%) դպրոցների կառավարման խորհուրդների կողմից տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն չի իրականացվել:

➢ կառավարման խորհրդի կողմից դպրոցի տնօրենին կրթության որակի բարձրացմանն ուղղված գործառույթների ուղղությամբ հանձնարարականների կամ առաջարկությունների կատարողականը քննարկվել է 9(60%) դպրոցներում ***(Փանիկի մ/դ, Գլաձորի մ/դ, Մեղրիի թիվ 1 մ/դ, Կապանի թիվ 10 մ/դ, Սարդարապատի մ/դ, Սիսիանի թիվ 5 հ/դ, Վանաձորի թիվ 6 հ/դ, Գյումրու թիվ 41 հ/դ, Կապանի թիվ 13 հ/դ),*** կատարողականը չի քննարկվել 3(20%) դպրոցներում ***(Գետափի մ/դ, Մեծավանի մ/դ, Գյումրու թիվ 5 հ/դ)*** և հանձնարարականի (առաջարկության) անհրաժեշտություն եղել է, սակայն չի տրվել՝ 3(20%) դպրոցներում ***(Սիսավանի մ/դ, Ջրառատի մ/դ, Գորիսի թիվ 6 հ/դ)*** դպրոցներում:

➢ կառավարման խորհրդի կողմից դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվել է առնվազն յուրաքանչյուր կիսամյակ՝ 4 (27%) դպրոցներում (**Կապանի թիվ 10 մ/դ, Սարդարապատի մ/դ, Մեծավանի թիվ 2 մ/դ, Մեղրիի թիվ 1 մ/դ**), վերահսկողությունն իրականացվել է տարեկան մեկ անգամ՝ 10 (67%) դպրոցներում ***(Գլաձորի մ/դ, Փանիկի մ/դ, Գետափի մ/դ, Ջրառատի մ/դ, Սիսավանի մ/դ, Կապանի թիվ 13 հ/դ, Գյումրու թիվ 41 հ/դ, Վանաձորի թիվ 6 հ/դ, Սիսիանի թիվ 5 հ/դ, Գյումրու թիվ 5 հ/դ):*** Վերահսկողություն չի իրականացվել ***Գորիսի թիվ 6 հ/դ***-ում:

➢ կառավարման խորհրդի կողմից ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունների վերաբերյալ դպրոցի տնօրենին հանձնարարականներ կամ առաջարկություններ տալը, դրանց կատարողականներին անդրադառնալը լիարժեք իրականացվել են 2 դպրոցներում ***(Սարդարապատի մ/դ, Կապանի թիվ 13 հ/դ):*** Նշված գործընթացը մասամբ է կատարվել 7 (47%) դպրոցներում (***Կապանի թիվ 10 մ/դ, Մեղրիի թիվ 1 մ/դ, Գլաձորի մ/դ, Փանիկի մ/դ, Սիսիանի թիվ 5 հ/դ, Վանաձորի թիվ 6 հ/դ, Գյումրու թիվ 41 հ/դ***), կատարողականը չի քննարկվել 3 (20%) դպրոցներում (**Գետափի մ/դ, Ջրառատի մ/դ, Մեծավանի թիվ 2 մ/դ):** Հանձնարարականի (առաջարկության) անհրաժեշտություն եղել է, սակայն չի տրվել 4 (27%) դպրոցներում (***Սիսավանի մ/դ, Գյումրու թիվ 5 հ/դ, Գորիսի թիվ 6 հ/դ***):

➢ կառավարման խորհուրդը չի քննարկել դպրոցի ներքին գնահատման արդյունքները ***Փանիկի մ/դ-ում:***

➢ կառավարման խորհրդի կողմից դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացվել է առնվազն յուրաքանչյուր կիսամյակ՝ 2 (***Սարդարապատի մ/դ, Կապանի թիվ 10 մ/դ***), տարեկան 1 անգամ՝ 10 (67%) (***Ջրառատի մ/դ, Գետափի մ/դ, Մեղրիի թիվ 1 մ/դ, Գլաձորի մ/դ, Փանիկի մ/դ, Գյումրու թիվ 5 հ/դ, Գորիսի թիվ 6 հ/դ, Կապանի թիվ 13 հ/դ, Գյումրու թիվ 41 հ/դ, Սիսիանի թիվ 5 հ/դ***), չի իրականացվել՝ 2 (13%) դպրոցներում (***Սիսավանի մ/դ, Մեծավանի թիվ 2 մ/դ***) դպրոցներում:

➢ զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումների շրջանակում խորհրդի կողմից տնօրենին տրամադրվել է խորհրդատվություն տարեկան առնվազն 2 անգամ՝ 2 (13%) դպրոցներում (***Կապանի թիվ 10 մ/դ, Կապանի թիվ 13 հ/դ***), տարեկան 1 անգամ՝ 1 (**Մեղրիի թիվ 1 մ/դ**), չի տրամադրվել խորհրդատվություն 10 (67%) (***Սարդարապատի մ/դ, Մեծավանի թիվ 2 մ/դ, Սիսավանի մ/դ, Փանիկի մ/դ, Գլաձորի մ/դ, Գետափի մ/դ, Ջրառատի մ/դ, Գորիսի թիվ 6 հ/դ, Գյումրու թիվ 5 հ/դ, Սիսիանի թիվ 5 հ/դ***) դպրոցներում:

➢ կրթական գործընթացի **բոլոր** մասնակիցներն (*մանկավարժական աշխատողներ, աշակերտներ, ծնողներ, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները և այլն*) ներգրավվել են զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներում 6 դպրոցներում (***Կապանի թիվ 10 մ/դ, Մեղրիի թիվ 1 մ/դ, Սարդարապատի մ/դ, Կապանի թիվ 13 հ/դ, Գյումրու թիվ 5 հ/դ, Գորիսի թիվ 6 հ/դ),*** **ոչ բոլոր** մասնակիցներն են ներգրավվել՝

***Ջրառատի մ/դ, Գետափի մ/դ, Գլաձորի մ/դ, Փանիկի մ/դ, Սիսավանի մ/դ, Մեծավանի թիվ 2 մ/դ, Սիսիանի թիվ 5 հ/դ*)** դպրոցներում:

➢ վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածում կառավարման խորհուրդը դպրոցի գործունեության վերաբերյալ լիազորված մարմին առաջարկություններ է ներկայացրել 2 և ավելի անգամ՝ ***Գյումրու թիվ 41 հ/դ-ում,*** առաջարկություններ ներկայացրել է մեկ անգամ՝ 6 (40%) ***(Գլաձորի մ/դ, Փանիկի մ/դ, Սարդարապատի մ/դ, Կապանի թիվ 13 հ/դ, Վանաձորի թիվ 6 հ/դ, Սիսիանի թիվ 5 հ/դ)*** դպրոցներում, առաջարկություններ չի ներկայացրել՝ 8 ***(Ջրառատի մ/դ, Գետափի մ/դ, Սիսավանի մ/դ, Մեծավանի թիվ 2 մ/դ, Մեղրիի թիվ 1 մ/դ, Կապանի թիվ 10 մ/դ, Գյումրու թիվ 5 հ/դ, Գորիսի թիվ 6 հ/դ)*** դպրոցներում:

Ներկայացնենք գնահատման արդյունքում դպրոցների տնօրենների և կառավարման խորհուրդների գնահատականների համեմատական պատկերը (Գծապատկեր 10): Հորիզոնական առանցքով ներկայացված են դպրոցների գնահատման արդյունքներն ըստ «Տնօրեն», իսկ ուղղահայաց առանցքով՝ գնահատման արդյունքներն ըստ «Կառավարման խորհուրդ» հավելվածների:



Ինչպես ներկայացված է Գծապատկեր 10-ում՝ ըստ «Տնօրեն» հավելվածի «Լավ» գնահատված 10 դպրոցները (121-210 միավոր)՝ ըստ «Կառավարման խորհուրդ» հավելվածի գնահատման արդյունքների սփռված են 29-64 միավոր միջակայքում: Մինչդեռ «Կառավարման խորհուրդ» հավելվածի գնահատման սանդղակի համաձայն՝ 73-63 միավորը համարվում է «Գերազանց», 62-51՝ «Շատ լավ», 50-35՝ «Լավ», 34-16՝ «Բավարար» արդյունք:

Գնահատականները փոխկապակցված չեն: Այդ մասին է վկայում նաև գնահատված դպրոցների՝ ըստ նշված հավելվածների գնահատականների կապի բնութագրիչը (կորելյացիա): Կորելյացիայի բնութագրիչը ստացվել է 0.11, ինչը վկայում է գնահատման արդյունքների միմյանցից անկախ լինելու մասին (Գծապատկեր 11):



Համաձայն Գծապատկեր 11–ի տվյալների՝ ըստ «Տնօրեն» հավելվածի համեմատաբար բարձր գնահատված դպրոցում գրանցվել են «Կառավարման խորհուրդ» հավելվածի գնահատման ցածր արդյունքներ կամ հակառակը: Այսինքն, դպրոցներում այս օղակները միմյանց հետ թույլ են համագործակցում՝ չնայած այն հանգամանքին, որ հավելվածներում ներառված են դպրոցում կրթության որակին առնչվող գործառույթներին վերաբերող բնութագրիչներ:

Չափանիշ 5. Ուսումնական միջավայր

Այս չափանիշի համար հիմք են հանդիսացել ձևաթղթի «Ուսումնական միջավայր» հավելվածի գնահատման արդյունքները: Դպրոցի ուսումնական միջավայրի գնահատումն իրականացվել է համաձայն հետևյալ բնութագրիչների՝

- դպրոցի շենքային պայմաններ
- համակարգչային կաբինետ
- լաբորատորիաներ
- գրադարան
- մարզադահլիճ
- դասագրքեր
- ծրագրեր, ուսումնամեթոդական նյութեր,
- հեռավար ուսուցմամբ ուսումնական գործընթացի ապահովում,

- տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիական միջոցների կիրառում,
- ինտերնետային կապով ապահովվածություն:

Դպրոցների ուսումնական միջավայրի գնահատման արդյունքում ամենացածր արդյունքը գրանցվել է Գետափի միջնակարգ, ամենաբարձրը՝ Եղեգնաձորի ավագ դպրոցներում:



Ինչպես ներկայացված է Գծապատկեր 12-ում ուսումնական միջավայրը «Գերազանց» գնահատվել է 5, «Շատ լավ»՝ 7, «Լավ»՝ 4 դպրոցներում: Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ դպրոցները կարիք ունեն ֆիզիկական միջավայրի բարելավման, քանի որ գնահատման արդյունքում ունենք հետևյալ պատկերը.

- ֆիզիկական միջավայրը մասամբ է հարմարեցված բոլոր սովորողների և մանկավարժների համար 9(56%) դպրոցներում ***(Գետափի մ/դ, Գլաձորի մ/դ, Գյումրու հ. 41 հ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Ջրառատի մ/դ, Սիսավանի մ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ, Փանիկի մ/դ)***:
- համակարգչային կաբինետում համակարգիչները հին սերնդի են, էլեկտրոնային դասեր հազվադեպ են անցկացվում 7(44%) դպրոցներում ***(Գլաձորի մ/դ, Գյումրու հ. 5 հ/դ, Գորիսի հ. 6 հ/դ, Կապանի հ. 10 մ/դ, Ջրառատի մ/դ, Սիսավանի մ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ)***:
- լաբորատորիաների գույքը հնամաշ է, արդյունավետ չեն գործում 11 (69%) դպրոցներում ***(Գետափի մ/դ, Գլաձորի մ/դ, Գյումրու հ. 5 հ/դ, Գյումրու հ. 41 հ/դ, Կապանի հ. 10 մ/դ, 13 հ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Մեղրիի հ. 1 մ/դ, Սիսավանի մ/դ, Սարդարապատի մ/դ, Փանիկի մ/դ)***, դպրոցը չունի լաբորատորիաներ՝ 1-ում ***(Ջրառատի մ/դ):***

- գրադարանները թերհագեցած են, ընթերցասրահները փոքր են և անհարմարավետ 10 (63%) դպրոցներում ***(Գեղափի մ/դ, Գլաձորի մ/դ, Գյումրու հ. 5 հ/դ, Գյումրու հ. 41 հ/դ, Կապանի հ. 10 մ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Մեղրիի հ. 1 մ/դ, Ջրառատի մ/դ, Սիսավանի մ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ)***:
- մարզադահլիճներն անբարեկարգ են և չեն բավարարում բոլոր դասարանների ուսումնական պարապմունքների համար 7 (44%) դպրոցներում ***(Գեղափի մ/դ, Գլաձորի մ/դ, Գյումրու հ. 41 հ/դ, Կապանի հ. 10 մ/դ, Ջրառատի մ/դ, Սիսավանի մ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ)***, չկա գործող մարզադահլիճ՝ 1-ում (***Գյումրու հ. 5 հ/դ***):
- առկա են անհրաժեշտ առարկայական ծրագրերը, սակայն ուսումնամեթոդական նյութերը սակավ են 5 (31%) դպրոցներում ***(Գեղափի մ/դ, Գլաձորի մ/դ, Սիսավանի մ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ, Փանիկի մ/դ)***:
- հեռավար ուսուցման կազմակերպման համար սովորողների՝ անհատական տեխնիկական միջոցներով ապահովվածությունը կազմում է 70-90% դպրոցներից 7-ում (44%) ***(Գլաձորի մ/դ, Գորիսի հ. 6 հ/դ, Կապանի հ. 13 հ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ, Փանիկի մ/դ),*** 46-69%՝ 2 (13%) դպրոցում ***(Գեղափի մ/դ, Գյումրու հ. 41 հ/դ),*** ապահովված են սովորողների 31-45%-ը ***Սիսավանի մ/դ-ում***:
- հեռավար ուսուցման կազմակերպման համար ուսուցիչների՝ անհատական տեխնիկական միջոցներով ապահովվածությունը կազմում է 81-89% 4 դպրոցներում ***(Գյումրու հ. 41 հ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ, Փանիկի մ/դ),*** 31-80%՝ 2 դպրոցներում ***(Գեղափի մ/դ, Գլաձորի մ/դ):***
- հեռավար ուսուցմամբ ուսումնական գործընթացի ապահովումն իրականացվել է սահմանված միջոցների մասնակի կիրառմամբ 10 (63%) դպրոցներում ***(Գեղափի մ/դ, Գլաձորի մ/դ, Գյումրու հ. 41 հ/դ, Եղեգնաձորի ա/դ, Կապանի հ. 10 մ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Ջրառատի մ/դ, Սիսավանի մ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ)***:
- ***Գեղափի մ/դ***-ում ինտերնետային կապը մշտական չէ:

Կորելյացիոն կապ է հաստատվել «Տնօրեն» և «Ուսումնական միջավայր» հավելվածների գնահատման արդյունքների միջև: Կապի բնութագրիչը ստացվել է 0.4, ինչը վկայում է այս բնութագրիչների գնահատման արդյունքների թույլ կապի մասին (Գծապատկեր 13):



Գնահատված դպրոցների առնվազն 50%-ի դեպքում համեմատականորեն բարձրանում են գնահատման արդյունքներն ըստ 2 հավելվածների:

Չափանիշ 6. Դիմակայունություն

Ձևաթղթի բնութագրիչները բխում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ դպրոցի տարատեսակ աղետներին դիմակայունությանը, դրանց ռիսկի նվազեցմանը, արտակարգ իրավիճակներում գործելու ուղիներին վերաբերող պահանջներից: Դպրոցներում դիմակայունության գնահատումն իրականացվել է համաձայն հետևյալ բնութագրիչների՝

➢ շենքային պայմաններ (գնահատվել են անվտանգ տարածքի, տարահանման ուղիների և ուսումնական հաստատությունը որպես անվտանգ վայր կամ ժամանակավոր կացարան ծառայելու, էլեկտրաէներգիայի ապահովման այլընտրանքային տարբերակի հնարավորությունը):

➢ աղետների ռիսկի նվազեցման գործընթաց (գնահատվել են ուսումնական հաստատության աղետների ռիսկի նվազեցման խորհրդի, մասնագիտացված խմբերի գործառույթները):

➢ հաղորդակցության ու ազդարարման կազմակերպում (գնահատվել է ազդարարման գործընթացը):

➢ հոգեբանասոցիալական աջակցության, կրթական շարունակականության, կրթության կազմակերպման և մատչելիության ապահովում (գնահատվել են արտակարգ իրավիճակներում ուսումնական հաստատության կողմից իրականացվող հոգեբանասոցիալական աջակցության

աշխատանքները, կրթական գործունեության շարունակականության և կրթության գործընթացի վերականգնման ուղղությամբ ձեռնարկված նախապատրաստական քայլերը):

Դպրոցների դիմակայունության գնահատման արդյունքում ամենացածր արդյունքը գրանցվել է Ջրառատի, ամենաբարձրը՝ Սարդարապատի միջնակարգ դպրոցներում (Գծապատկեր 14):



Ըստ Գծապատկեր 14-ի տվյալների՝ դիմակայունությունը «Գերազանց» գնահատվել է 2, «Շատ լավ»՝ 5, «Լավ»՝ 7, «Բավարար» և «Անբավարար»՝ 1-ական դպրոցներում:

Դիմակայունության գնահատման արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը՝

- շենքային պայմանների խոցելիության գնահատման ընթացքում հաշվի են առնվել ոչ բոլոր հանգամանքները, դպրոցների ժամանակավոր կացարանի տարածքները մասամբ են ապահովված եղել անհրաժեշտ պայմաններով և չեն բավարարել բոլոր սովորողների համար 9 (56%) դպրոցներում ***(Գյումրու հ. 5 հ/դ, Գյումրու հ. 41 հ/դ, Սարդարապատի մ/դ, Գետափի մ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Գլաձորի մ/դ, Եղեգնաձորի ա/դ, Սիսիանի հ. 5 հ/դ, Կապանի հ. 13 հ/դ):***
- առանձնացված ժամանակավոր կացարաններ առկա չեն 3(19%) դպրոցներում ***(Սիսավանի մ/դ, Մեղրիի հ. 1 մ/դ, Ջրառատի մ/դ)***:
- աղետների ռիսկի նվազեցման գործողությունների մշակումը չեն իրականացրել դպրոցի աղետների ռիսկի նվազեցման խորհուրդները (այսուհետ՝ խորհուրդ)՝ դպրոցներին սպառնացող վտանգների, խոցելիության, կարողությունների վերլուծության և բացահայտված

խնդիրների առաջնահերթությունների սահմանման հիման վրա 3(19%) դպրոցներում ***(Գորիսի հ. 6 հ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Ջրառատի մ/դ)***:

- խորհուրդը յուրաքանչյուր տարի անցկացրել է ընդամենը մեկ պլանային նիստ 3(19%) (***Գյումրու հ. 5 հ/դ, Կապանի հ. 13 հ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ***), նիստեր չի անցկացրել՝ 4 դպրոցներում (***Գորիսի հ. 6 հ/դ, Եղեգնաձորի ա/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Ջրառատի մ/դ***):
- մասնագիտացված խմբերի կազմման համամասնությունը մասամբ է պահպանվել 4 (25%) դպրոցներում ***(Գորիսի հ. 6 հ/դ, Եղեգնաձորի ա/դ, Կապանի հ. 10 մ/դ, Մեղրիի հ. 1 մ/դ)***, չի պահպանվել՝ 2 (13%) դպրոցներում ***(Մեծավանի հ. 2 մ/դ, Ջրառատի մ/դ):***
- հաստատությունը չունի գործող ազդարարման համակարգ՝ ***Սիսավանի մ/դ-ում:***
- ազդարարման վարժանքները կազմակերպվել և անցկացվել են վեց ամիսը մեկ անգամ՝ 8 (50%) դպրոցներում ***(Սիսավանի մ/դ, Գեղարքունիքի մ/դ, Գլաձորի մ/դ, Գյումրու հ. 5 մ/դ, Կապանի հ. 10 մ/դ, 13 հ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ, Եղեգնաձորի ա/դ),*** 2-ում՝ 12.5% ***(Գյումրու հ. 41 հ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ)*** անցկացվել են տարին 1 անգամ և 1-ում՝ 6.25% ***(Ջրառատի մ/դ)*** ազդարարման վարժանքներ չեն կազմակերպվել:
- Դպրոցներից 6-ում՝ 37.5% ***(Գյումրու հ. 41 հ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ, Գեղարքունիքի մ/դ, Գլաձորի մ/դ, Կապանի հ. 10 մ/դ, Ջրառատի մ/դ***) հոգեբանասոցիալական աջակցության աշխատանքներ իրականացվել են մասամբ:
- արտակարգ իրավիճակներում դպրոցի գործունեության շարունակականության և կրթության գործընթացի վերականգման ուղղությամբ նախապատրաստական քայլեր են ձեռնարկվել դպրոցներից 8-ում՝ 50% ***(Գեղարքունիքի մ/դ, Գլաձորի մ/դ, Գորիսի հ. 6 հ/դ, Կապանի հ. 10 մ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Ջրառատի մ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ),*** նախապատրաստական աշխատանքներ չեն ձեռնարկվել՝ ***Եղեգնաձորի ա/դ-ում***:
- արտակարգ իրավիճակում կրթության շարունակականությունն ապահովող ուսումնական պլանների և ծրագրերի պարզեցված փաթեթներ առկա չեն եղել 10 (63%) ***(Գեղարքունիքի մ/դ, Գլաձորի մ/դ, Գյումրու հ. 41 հ/դ, Եղեգնաձորի ա/դ, Կապանի հ. 10 մ/դ և հ. 13 հ/դ, Ջրառատի մ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ, Փանիկի մ/դ)***, արտակարգ իրավիճակում կրթության շարունակականությունն ապահովող ուսումնական պլանների և ծրագրերի պարզեցված փաթեթները եղել են ոչ ամբողջական՝ 2 (12.5%) դպրոցներում ***(Սիսավանի մ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ)***:

Դիմակայունության գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ վերոթվարկված դպրոցները պետք է միջոցներ ձեռնարկեն արտակարգ իրավիճակներում աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ:

Հավելված 7. Կանոններ

Ձևաթղթի բնութագրիչները բխում են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով դպրոցում կիրառվող սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման պահանջներից: Գնահատումն իրականացվել է համաձայն հետևյալ բնութագրիչների՝

- կանխարգելիչ միջոցներով ապահովվածությունը (գնահատվել են դիմակների, ձեռքերի և մակերեսների մշակման համար նախատեսված հականեխիչ/ախտահանիչ միջոցների, ձեռքերի լվացման համար հոսող ջրի, արմնկային կամ ոտնակային կառավարման ծորակների, օճառի առկայությունը և կիրառումը և այլն),
- կանխարգելիչ միջոցառումների իրականացումը (սովորողների, աշխատակիցների ջերմաչափում, սովորողների շարժի բացառում, ախտահանման գործընթաց, հեռավար կամ տնային ուսուցման կազմակերպում),
- կրթական գործընթացի մասնակիցներին ներկայացվող պահանջների կատարումը (սովորողների առավելագույն թիվը դասարաններում, բարձր ռիսկի խմբի 65 և բարձր տարիքի աշխատողների առկայությունը),
- դպրոցի կողմից արտաուսումնական միջոցառումներ և ծառայություններ չիրականացնելը (մանկական միջոցառումներ, ֆիլմերի դիտում, սպորտային միջոցառումներ,զվարճանքներ, բեմականացումներ, երկարօրյա ծառայությունները, արտաուսումնական խմբակներ),
- ժողովների, հավաքների իրականցումը, սննդի ընդունման կազմակերպումը (համապատասխանությունը սահմանված պահանջներին):

Սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման ուղղությամբ դպրոցների գնահատումը ներկայացված է Գծապատկեր 15-ում.



Ինչպես ներկայացված է Գծապատկեր 15-ում՝ սանիտարահիգիենիկ կանոնների պահպանումը «Գերազանց» է գնահատվել՝ 11, «Շատ լավ»՝ 5 դպրոցներում: Գնահատման արդյունքում պարզվել է՝

- տնօրենի կողմից չի նշանակվել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով միջոցառումների պատասխանատու՝ ***Ջրառատի մ/դ-ում***:
- դպրոցներից 4-ը (25%) ***(Գետափի մ/դ, Գլաձորի մ/դ, Մեղրիի հ. 1 մ/դ, Ջրառատի մ/դ)***՝ մասամբ են ապահովված դիմակների, ձեռքերի և մակերեսների մշակման համար նախատեսված հականեխիչ/ախտահանիչ միջոցներով, ձեռքերի լվացման համար հոսող ջրի, արմնկային կամ ոտնակային կառավարման ծորակներով:
- դպրոցներից 5-ը (31%) ***(Գլաձորի մ/դ, Գորիսի հ. 6 հ/դ, Եղեգնաձորի ա/դ, Կապանի հ. 10 մ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ)*** մասամբ են ապահովված թափոնների հեռացման համար փակվող «Օգտագործված դիմակներ» մակնշմամբ, կափարիչի ոտնակային կամ սենսորային կառավարման փակվող կափարիչով աղբամաններով, իսկ ***Ջրառատի մ/դ-ն*** ապահովված չէ:
- սովորողների առավելագույն թիվը գերազանցում է սահմանվածը 2 (12.5%) դպրոցներում՝ ***(Եղեգնաձորի ա/դ, Ջրառատի մ/դ)***:
- մասամբ են գործում երկարօրյա ծառայությունները և խմբակները 4 (25%) դպրոցներում ***(Կապանի հ. 10 մ/դ, Մեղրիի հ. 1 մ/դ, Ջրառատի մ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ)***, ***<u>խմբակները գործում են</u>՝ Գետափի մ/դ-ում:***

➢ առկա չէ սենք (մեկուսարան) COVID-19-ին բնորոշ ախտանշաններ՝ հազ, ջերմություն, դժվարացած շնչառություն ունեցող սովորողներին և աշխատողներին մեկուսացնելու համար՝ 2 (13%) դպրոցներում ***(Կապանի հ. 10 մ/դ, Ջրառատի մ/դ)***:

➢ պատշաճ կարգով չի կազմակերպվում սովորողների ջերմաչափումը, 37 աստիճան և բարձր ջերմություն արձանագրվելու դեպքում՝ արդյունքների գրանցումը «Սովորողների ջերմաչափման արդյունքների գրանցման մատյանում» (Ձև 2)՝ 2(13%) դպրոցներում ***(Գլաձորի մ/դ, Ջրառատի մ/դ)***, անձնակազմի դեպքում չի իրականացվում՝ ***Ջրառատի մ/դ-ում:***

➢ ախտահանման գործընթացի արդյունքների գրանցամատյանում չեն գրանցվում՝ 2(13%) դպրոցներում ***(Գեղաձիր մ/դ, Ջրառատի մ/դ)***:

➢ դասերի անցկացումը իրականացվում է ոչ կոնկրետ դասարաններում՝ ինչը հանգեցնում է սովորողի տեղաշարժի՝ 2(13%) դպրոցներում ***(Գլաձորի մ/դ, Եղեգնաձորի ա/դ):***

➢ սննդի ընդունումը դպրոցում և դասասենյակներում մասամբ է կազմակերպվում 2(13%) դպրոցներում՝ 12.5% ***(Գլաձորի մ/դ, Եղեգնաձորի ա/դ)***:

Չնայած գնահատման արդյունքները միայն «Գերազանց» են և «Շատ լավ», այնուհանդերձ որոշ դպրոցներում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելմանն ուղղված սանիտարահիգիենիկ կանոնները ոչ ամբողջությամբ են պահպանում:

Այսպիսով, ըստ չափանիշների կշռավորման և գնահատման (մինչև 39 միավոր՝ «Անբավարար», 40-55 միավոր՝ «Բավարար», 56-70 միավոր՝ «Լավ», 71-85 միավոր՝ «Շատ լավ», 86-100 միավոր՝ «Գերազանց») առկա է հետևյալ պատկերը (Գծապատկեր 16)՝



«Լավ» արդյունք է գրանցվել Մեղրիի հ. 1 միջնակարգ և Գորիսի հ. 6 հիմնական դպրոցներում, «Անբավարար» արդյունք՝ Սիսավանի և Ջրառատի միջնակարգ դպրոցներում:

Ըստ հավելվածների գնահատականների միջին արդյունքի՝ ստացվել է հետևյալ պատկերը (Աղյուսակ 3)՝

Աղյուսակ 3

N	Հավելված	Միջին գնահատական (միավոր)	Մակարդակն՝ ըստ գնահատման սանդղակի
1.	«Տնօրեն»	148	«Լավ»
2.	«Կառավարման խորհուրդ»	41	«Լավ»
3.	«Ուսումնական միջավայր»	60	«Շատ լավ»
4.	«Ուսուցիչներ»	71	«Բավարար»
5.	«Սովորողների մնացորդային գիտելիքներ»	4.2	«Բավարար»
6.	«Դիմակայունություն»	48	«Լավ»
7.	«Կանոններ»	123	**«Գերազանց»**

Աղյուսակ 3-ի տվյալների համաձայն՝ դպրոցները անելիք ունեն գրեթե բոլոր հավելվածների բնութագրիչներով նախատեսված գործառույթների բարելավման ուղղությամբ:

Եզրակացություն

Հիերարխիկ վերլուծության մեթոդի կիրառմամբ ստուգված դպրոցները համեմատվել են ըստ կրթության որակի նախապես ընտրված չափանիշների՝ միաժամանակ հաշվի առնելով ըստ բոլոր չափանիշների գնահատման արդյունքները և դրանց կարևորությունը:

Կրթության որակի բոլոր չափանիշներով գնահատման արդյունքների համեմատման և նորմավորման արդյունքում ստացված պատկերը ներկայացված է Գծապատկեր 17-ում: Գծապատկերը ցույց է տալիս, թե մեկ ամբողջության մեջ հաստատություններից յուրաքանչյուրը կրթական գործընթացի արդյունավետության տեսանկյունից ինչ ազդեցություն ունի[3]:

[3] Ինչպես արտահայտված է գծապատկեր 17-ում՝ Մեղրիի հ. 1 մ/դ-ի ազդեցությունը կրթական գործընթացի արդյունավետության տեսանկյունից 100%-ի մեջ կազմել է 8.5%, իսկ Ջրառատի մ/դ-ի դեպքում՝ 3.7%:



Գծապատկերում ներկայացված են ուսումնական հաստատությունների գրանցած արդյունքներն կրթության որակի գնահատման (նախանշված չափանիշներով) և դրանց արդյունքների համեմատության արդյունքում: Կրթության որակի վերջնական գնահատման վրա ազդել են բոլոր չափանիշներով գնահատման արդյունքները: Դպրոցների կրթության որակի գնահատման արդյունքներն, ըստ յուրաքանչյուր չափանիշի, ներկայացված են գծապատկեր 18-ում:

Կրթական գործընթացի որակի գնահատման արդյունքների համեմատական պատկերն՝ ըստ չափանիշների

Գծապատկեր 18



Գծապատկերում ակնառու ներկայացված է, թե համեմատման արդյունքում դպրոցներից յուրաքանչյուրն, ըստ յուրաքանչյուր չափանիշի, ինչ արդյունք է գրանցում 16 դպրոցների շարքում: Դիագրամում դպրոցները դասավորված են ըստ «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքների արդյունքների աճման (ցածրից՝ բարձր):

Ստորև ներկայացված են ամփոփ արդյունքներն՝ ըստ խնդիրների.

Գրավոր աշխատանքների արդյունքներ

✓ «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի միջոցով վերոնշյալ 16 դպրոցներում սովորողների մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքում միջին գնահատականը կազմել է 4.2 միավոր: 7 (44%) դպրոցներում այդ ցուցանիշը կազմել է 4 միավոր՝ պարտադիր նվազագույնից ցածր:

✓ տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքների և նույն սովորողների նախորդ տարվա ամփոփ գրավոր աշխատանքների գնահատականների համադրման արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը՝ «Գերազանց» են գնահատվել գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների 6%-ը, «Անբավարար»՝ 48%-ը, մինչդեռ նախորդ տարվա ամփոփ գրավոր աշխատանքից «Գերազանց» են գնահատվել նույն սովորողների 14%-ը, «Անբավարար»՝ 4%:

Սովորողների տարեկան գնահատականները հիմնականում համընկնում են նախորդ տարվա ամփոփ գրավոր աշխատանքների գնահատականների հետ: Համադրման պատկերը հակասական է հատկապես «Անբավարար» գնահատված սովորողների պարագայում: Ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ ուսուցիչների կողմից սովորողների գիտելիքների գնահատումը չի իրականացվում առարկայական չափորոշիչներին համապատասխան:

Ուսուցիչներ

✓ Գնահատված ուսուցիչներից 9-ի (26%) դասավանդած դասարաններում ցածր (4-6) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը նախորդ երկու կիսամյակներից առաջինի նկատմամբ երկրորդում աճել է՝ 6 դպրոցներում:

✓ ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքների արդյունքում «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է 41%-ից ավելի՝ 12 դպրոցներում:

✓ առարկայական օլիմպիադայի մարզային փուլ անցած մասնակիցներ չեն եղել 14 դպրոցներում:

✓ ուսուցիչները կրթական ծրագրերի, կոնֆերանսների, համաժողովների մասնակցություն չեն ունեցել 11 դպրոցներում:

✓ հեռավար կրթության արդյունավետ կազմակերպման նպատակով իրականացված վերապատրաստման գործընթացների չեն մասնակցել 8 դպրոցների ուսուցիչներ:

✓ գիտամանկավարժական հոդվածներ չեն հրապարակել 14 դպրոցների ուսուցիչներ:

Տնօրեն

➢ Ըստ «Լավ» (7-8) և «Գերազանց» (9-10) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թվի (նախորդ ուստարում) ցածր արդյունքներ են գրանցվել դպրոցներում:

➢ Ցածր (4-6) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը նախորդ երկու կիսամյակներից առաջինի նկատմամբ աճել է՝ 5 դպրոցներում:

➢ Ավարտման ցուցանիշը՝ ըստ կրթական ***3-րդ աստիճանի*** կազմել է 100%-ից ցածր (նախորդ ուսումնական տարում եղել են պետական ավարտական քննություններից անբավարար ստացած սովորողներ) ***2*** դպրոցներում: Ավարտման ցուցանիշը՝ ըստ կրթական ***2-րդ աստիճանի*** կազմել է 100%-ից ցածր (նախորդ ուսումնական տարում եղել են ավարտական քննություններից անբավարար ստացած սովորողներ) ***3*** դպրոցներում:

➢ Նախորդ ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողների տոկոսային թիվը սովորողների ընդհանուր թվի նկատմամբ գտնվել է 2% - 5%՝ 1 **դպրոցում**:

➢ Նախորդ ուսումնական տարվա ընթացքում 200 ժամից ավելի բացակայած սովորողների տոկոսային թիվը սովորողների ընդհանուր թվի նկատմամբ գտնվել է **1%-3%** միջակայքում՝ ***2*** դպրոցներում:

➢ Տեսչական մարմնի կողմից տրված «Մաթեմատիկայի» գրավոր աշխատանքների արդյունքում «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է **41 %-ից ավելի՝** 8 դպրոցներում:

➢ Տեսչական մարմնի կողմից տրված «Մաթեմատիկայի» գրավոր աշխատանքների արդյունքում «Լավ» և «Գերազանց» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է մինչև 30%՝ 14 **դպրոցներում**:

➢ Տեսչական մարմնի կողմից տրված բոլոր գրավոր աշխատանքներից «Լավ» և «Գերազանց» գնահատականը պահպանած սովորողների միջին տոկոսային թիվը նախորդ կիսամյակում «Լավ» և «Գերազանց» գնահատական ստացած սովորողների միջին տոկոսային թվի նկատմամբ (հաշվարկվել է ըստ առարկաների և միջինացվել) **բոլոր դպրոցներում *նվազել է*** (ցածր ցուցանիշ):

➢ Գնահատված դպրոցներում «Շատ լավ» և «Գերազանց» գնահատված ուսուցիչներ չկան:

➢ Գնահատված բոլոր դպրոցներում էլ հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ:

➢ Ուսուցիչների վերապատրաստման գործընթացը՝ հեռավար կրթությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով չի իրականացվել՝ 2 դպրոցներում:

➢ Աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու կառավարման խորհուրդը տնօրենի հրամանով և սահմանված կարգով չի ստեղծվել 2 դպրոցներում:

➢ Դպրոցի անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով չի մշակվել ուսումնական հաստատության և հարակից տարածքի առանձնահատկություններից բխող աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլան 1 **դպրոցում:**

➢ Դպրոցի տնօրենը և անձնակազմը, ԱԻ-ում բնակչության պաշտպանության բնագավառի համապատասխան ստորաբաժանումների, ՏԻՄ-երի ու ծնողների աջակցությամբ և սովորողների մասնակցությամբ, դպրոցի աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործընթացը չեն ապհովվել 1 դպրոցում:

➢ Ստուգումների ընթացքում բոլոր դպրոցներում էլ հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ:

Կառավարման խորհուրդ

➢ Կառավարման խորհրդի կողմից տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն չի իրականացվել 4 դպրոցներում:

➢ Կառավարման խորհրդի կողմից դպրոցի տնօրենին կրթության որակի բարձրացմանն ուղղված գործառույթների ուղղությամբ հանձնարարականների կամ առաջարկությունների անհրաժեշտություն եղել է, սակայն չի տրվել՝ 3 դպրոցներում դպրոցներում:

➢ Կառավարման խորհրդի կողմից դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության նկատմամբ վերահսկողությունն չի իրականացվել 1 դպրոցում:

➢ Կառավարման խորհրդի կողմից ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունների վերաբերյալ դպրոցի տնօրենին տրված հանձնարարականների կատարողականը չի քննարկվել 3 դպրոցներում: Հանձնարարականի (առաջարկության) անհրաժեշտություն եղել է, սակայն չի տրվել՝ 4 դպրոցներում:

➢ Կառավարման խորհուրդը չի քննարկել դպրոցի ներքին գնահատման արդյունքները 1 դպրոցում:

➢ Կառավարման խորհրդի կողմից դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել՝ 2 դպրոցներում դպրոցներում:

➢ Զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումների շրջանակում խորհրդի կողմից տնօրենին չի տրամադրվել խորհրդատվություն 10 դպրոցներում:

➢ Կրթական գործընթացի **ոչ բոլոր** մասնակիցներն (*մանկավարժական աշխատողներ, աշակերտներ, ծնողներ, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման*

մարմինների ներկայացուցիչները և այլն) են ներգրավվել զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներում ՝ 7 դպրոցներում**:**

➢ Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածում կառավարման խորհուրդը դպրոցի գործունեության վերաբերյալ լիազորված մարմին առաջարկություններ չի ներկայացրել՝ 8 դպրոցներում:

Ուսումնական միջավայր

➢ Համակարգչային կաբինետում համակարգիչները հին սերնդի են, էլեկտրոնային դասեր հազվադեպ են անցկացվում 7(44%) դպրոցներում:

➢ Լաբորատորիաների գույքը հնամաշ է, արդյունավետ չեն գործում 11 (69%) դպրոցներում: Դպրոցներից 1-ը չունի լաբորատորիաներ:

➢ Գրադարանները թերհագեցած են, ընթերցասրահները փոքր են և անհարմարավետ 10(63%) դպրոցներում:

➢ Մարզադահլիճներն անբարեկարգ են և չեն բավարարում բոլոր դասարանների ուսումնական պարապմունքների համար 7 (44%) դպրոցներում, չկա գործող մարզադահլիճ՝ 1-ում:

➢ Ուսումնամեթոդական նյութերը սակավ են 5 (31%) դպրոցներում:

➢ Հեռավար ուսուցման կազմակերպման համար սովորողների՝ անհատական տեխնիկական միջոցներով ապահովվածությունը կազմում է 46-69%՝ 2 (13%), 31-45%-ը՝ դպրոցներում:

➢ Հեռավար ուսուցման կազմակերպման համար ուսուցիչների՝ անհատական տեխնիկական միջոցներով ապահովվածությունը կազմում է 31-80%՝ 2 դպրոցներում*:*

➢ Հեռավար ուսուցմամբ ուսումնական գործընթացի ապահովումն իրականացվել է սահմանված միջոցների մասնակի կիրառմամբ 10 (63%) դպրոցներում:

➢ Ինտերնետային կապը մշտական չէ՝ 1 դպրոցում:

Դիմակայունություն

➢ Շենքային պայմանների խոցելիության գնահատման ընթացքում հաշվի են առնվել ոչ բոլոր հանգամանքները, դպրոցների ժամանակավոր կացարանի տարածքները մասամբ են ապահովված եղել անհրաժեշտ պայմաններով և չեն բավարարել բոլոր սովորողների համար 9 (56%) դպրոցներում*:*

➢ Առանձնացված ժամանակավոր կացարաններ առկա չեն 3(19%) պրոցներում:

➢ աղետների ռիսկի նվազեցման գործողությունների մշակումը չեն իրականացվել դպրոցներին սպառնացող վտանգների, խոցելիության, կարողությունների վերլուծության և

բացահայտված խնդիրների առաջնահերթությունների սահմանման հիման վրա 3(19%) դպրոցներում:

- Հաստատությունը չունի գործող ազդարարման համակարգ՝ 1 դպրոցում:
- Ազդարարման վարժանքները չեն կազմակերպվել և անցկացվել՝ 1 դպրոցում:
- Դպրոցներից 6-ում՝ 37.5% ***(Գյումրու հ. 41 հ/դ, Սիսիանի հ. 5 հ/դ, Գետափի մ/դ, Գլաձորի մ/դ, Կապանի հ. 10 մ/դ, Ջրառատի մ/դ***) հոգեբանասոցիալական աջակցության աշխատանքներ իրականացվել են մասամբ:
- Արտակարգ իրավիճակներում դպրոցի գործունեության շարունակականության և կրթության գործընթացի վերականգման ուղղությամբ նախապատրաստական քայլեր չեն ձեռնարկվել 1 դպրոցում:
- Արտակարգ իրավիճակում կրթության շարունակականությունն ապահովող ուսումնական պլանների և ծրագրերի պարզեցված փաթեթներ առկա չեն եղել 10 դպրոցներում:

Կանոններ

- Տնօրենի կողմից չի նշանակվել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով միջոցառումների պատասխանատու՝ 1 դպրոցում:
- Դպրոցներից 4-ը (25%) մասամբ են ապահովված դիմակների, ձեռքերի և մակերեսների մշակման համար նախատեսված հականեխիչ/ախտահանիչ միջոցներով, ձեռքերի լվացման համար հոսող ջրի, արմնկային կամ ոտնակային կառավարման ծորակներով:
- Դպրոցներից 5-ը (31%) մասամբ են ապահովված թափոնների հեռացման համար փակվող «Օգտագործված դիմակներ» մակնշմամբ, կափարիչի ոտնակային կամ սենսորային կառավարման փակվող կափարիչով աղբամաններով, իսկ 1 դպրոցը՝ ապահովված չէ:
- Սովորողների առավելագույն թիվը գերազանցում է սահմանվածը 2 (12.5%) դպրոցներում:
- Առկա չէ սենք (մեկուսարան) COVID-19-ին բնորոշ ախտանշաններ՝ հազ, ջերմություն, դժվարացած շնչառություն ունեցող սովորողներին և աշխատողներին մեկուսացնելու համար՝ 2 (13%) դպրոցներում:
- Պատշաճ կարգով չի կազմակերպվում սովորողների ջերմաչափումը, 37 աստիճան և բարձր ջերմություն արձանագրվելու դեպքում՝ արդյունքների գրանցումը «Սովորողների ջերմաչափման արդյունքների գրանցման մատյանում» (Ձև 2)՝ 2(13%) դպրոցներում, անձնակազմի դեպքում չի իրականացվում՝ 1 դպրոցում:
- Ախտահանման գործընթացի արդյունքների գրանցամատյանում չեն գրանցվում՝ 2(13%) դպրոցներում:
- Դասերի անցկացումը իրականացվում է ոչ կոնկրետ դասարաններում՝ ինչը հանգեցնում է սովորողի տեղաշարժի՝ 2(13%) դպրոցներում:

Առաջարկություններ

Ելնելով կրթական գործընթացի գնահատման արդյունքների վերլուծությունից՝ առաջարկվում է.

1. Գնահատված դպրոցների տնօրեններին՝

1) Բարելավել դպրոցի գործունեության գնահատման արդյունքները նշված չափանիշներին համապատասխան:

2) Աշխատանքներ տանել դպրոցում դասավանդման որակը բարձրացնելու ուղղությամբ՝ սովորողների գիտելիքների ելքային արդյունքները բարելավելու նպատակով:

3) Ելնելով դպրոցի հնարավորություններից՝ նպաստել դպրոցում կրթության որակի ապահովմանը:

4) Նպաստել ուսուցիչների մասնագիտական աճին ու զարգացմանը:

5) Համալրել դպրոցի նյութատեխնիկական բազան՝ ձեռք բերելով համապատասխան ռեսուրսներ, որոնք կնպաստեն կրթության որակի բարելավմանը:

6) Կրթության գործընթացի կազմակերպումն իրականացնել կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

2. Կառավարման խորհուրդներին՝

1) Տնօրենի գործունեության նկատմամբ իրականացնել ընթացիկ վերահսկողություն առնվազն յուրաքանչյուր կիսամյակ:

2) Կրթության որակի բարձրացմանն ուղղված՝ դպրոցի տնօրենի կողմից իրականացված գործառույթների արդյունքների վերաբերյալ քննարկումներ կազմակերպել խորհրդի նիստերում:

3) Լսել դպրոցի տնօրենի հաղորդումը կրթության որակի բարձրացմանն ուղղված գործառույթների ուղղությամբ, ներկայացնել առաջարկություններ (հանձնարարականներ): Անդրադառնալ հանձնարարականների կատարողականին:

4) Մասնակցել դպրոցի արտաքին գնահատմանը, քննարկել ներքին և արտաքին գնահատման արդյունքները:

5) Իրականացնել վերահսկողություն դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ:

6) Դպրոցի գործունեության վերաբերյալ՝ ըստ անհրաժեշտության՝ լիազորված մարմին ներկայացրել առաջարկություններ:

7) Խորհրդի գործունեությունը ծառայեցնել կրթության որակի ապահովմանը՝ առաջնորդվելով կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ:

3. Լիազոր մարմինների ղեկավարներին (ՀՀ ԿԳՄՍ նախարարին, ՀՀ մարզպետներին)՝

հանձնարարել համապատասխան ստորաբաժանումներին՝ քննարկել կրթական գործընթացի գնահատման արդյունքների վերլուծությունը, միջոցներ ձեռնարկել բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ:

4. Ուսուցիչներին՝

1) Աշխատել մասնագիտական աճի և զարգացման ուղղությամբ:

2) Դասավանդումն, այդ թվում գնահատումն, իրականացնել հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան:

3) Բարելավել սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը «Մաթեմատիկա» առարկայից:

4) Նպաստել տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություն ունեցող սովորողների հայտնաբերմանը:

ՌԳՍՊՎԳ վարչություն